



**LOMA LINDA UNIVERSITY
BEHAVIORAL MEDICINE CENTER-Ի
ԳՈՐԾԵԼԱԿԵՐՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

ԿԱՏԵԳՈՐԻԱ՝	ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ	ԿՈՐ՝	BC-55
ԹԵՄԱ՝	ՀԱՇՎԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ ԵՎ ՀԱՎԱՔԱԳՐՈՒՄ*	ՈՒՇԻ ՄԵՋ Է՝	12/2017
		ՓՈԽԱՐԻՆՈՒՄ Է՝	Նոր
		ԷՋ՝	1-ը 6-ից

1. ՆՊՍՏԱԿ

1.1. Այս քաղաքականությունը կիրառելի է Loma Linda University Behavioral Medicine Center-ին («LLUBMC»), ինչպես նաև իր Ֆինանսական աջակցության քաղաքականությանը (Financial Assistance Policy, FAP), և նախատեսված է համապատասխանելու կիրառելի դաշնային, նահանգային և տեղական օրենքների պահանջներին, ներառյալ, առանց սահմանափակման՝ 1986թ. Ներքին հարկային օրենսգրքի (Internal Revenue Code, IRC) 501(r) բաժնին, փոփոխված տարբերակով, և դրա կանոնակարգերին: Այս քաղաքականությունը սահմանում է այն քայլերը, որոնք կարող են իրականացվել LLUBMC-ի կողմից տրամադրված բժշկական խնամքի դիմաց չվճարելու դեպքում, ներառյալ, բայց չսահմանափակվելով՝ արտակարգ հավաքագրման գործողություններ (Extraordinary Collection Actions, ECA): LLUBMC-ը չի մերժի շտապ օգնության կամ բժշկական տեսակետից անհրաժեշտ խնամքը՝ հիմնվելով վճարունակության վրա: Այս քաղաքականության հիմքում ընկած սկզբունքներն են բոլոր հիվանդներին և պատասխանատու անձին (անձանց) ցույց տալ հավասարապես արժանապատիվ և հարգալից վերաբերմունք և համոզվել, որ հաշվի ներկայացման և հավաքագրման համապատասխան ընթացակարգերը համաչափ իրագործվում են, և համոզվել, որ ողջամիտ ջանքեր են գործադրվում որոշելու համար՝ արդյոք հիվանդի հաշվի ամբողջական կամ մասնակի վճարման համար պատասխանատու անձն (անձինք) իրավասու է (են) աջակցություն ստանալ FAP-ի շրջանակներում:

2. ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

2.1. LLUBMC-ը պարտավորվում է աջակցել ապահովագրված և չապահովագրված հիվանդներին բավարարել իրենց վճարային պարտավորությունները և հետևողական ու համապատասխան հաշիվների ներկայացման ու հավաքագրման գործողություններ իրականացնել FAP-ի շրջանակներում աջակցություն ստանալու իրավասու բոլոր հիվանդների համար:

* Մեջբերված է Loma Linda University Medical Center-ի գործելակերպի քաղաքականությունից C-55:

3. ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

- 3.1. LLUBMC-ը չի կիրառի ECA-ներ, ուղղակիորեն կամ իր լիազորված մատակարարների միջոցով, մինչև բոլոր ջանքերը չգործադրվեն՝ պարզելու համար, թե արդյոք հիվանդն իրավասու է LLUBMC-ի FAP աջակցություն ստանալու համար:
- 3.2. Հիվանդի կամ երաշխավորի (այստեղ «հիվանդ») պարտավորությունն է տրամադրել ճշգրիտ փոստային հասցե և հեռախոսի համար ծառայություններ ստանալիս կամ տեղափոխվելիս: Եթե հաշիվը չունի վավեր հասցե կամ հեռախոսի համար, դա կարող է ազդել ողջամիտ ջանքերի սահմանման վրա:
- 3.3. Ապահովագրություն ունեցող հիվանդների հանդեպ քաղաքավարությունից ելնելով՝ առաջին հայցը կներկայացվի նրանց ապահովագրական ընկերությանը: Երկրորդ և/կամ երրորդ կարգի վճարողներին հայցերը կներկայացվեն LLUBMC-ի կամ իր լիազորված մատակարարների կողմից՝ հիվանդի անունից, առաջնային ապահովագրական վճարողի հետ հայցի լուծումն ավարտելուց հետո: Չապահովագրված հիվանդներն իրենց հայցի համար հաշիվ կստանան անմիջապես LLUBMC-ից:
- 3.4. Երբ առաջնային և երկրորդ կարգի հայցերը լուծվեն, ապահովագրված և չապահովագրված բոլոր հաշիվները կենթարկվեն հավաքագրման նույն գործընթացին հիվանդի՝ LLUBMC-ի հաշվեկշռի համար:
- a. LLUBMC-ը կամ իր լիազորված մատակարարները չեն կիրառի ECA-ներ, մինչև 150 օր չանցնի դուրսգրումից հետո խնամքի համար ներկայացված առաջին հաշվի հայտարարագրի ամսաթվից, և մինչև բոլոր ջանքերը չգործադրվեն որոշելու համար՝ արդյոք հիվանդն իրավասու է ֆինանսական աջակցության համար FAP-ի շրջանակներում:
 - b. LLUBMC-ը կամ իր լիազորված մատակարարները հիվանդին փոստով կուղարկեն հաշվի չորս (4) հայտարարագիր, ներառյալ՝ ծանուցում, որում նշված կլինի, որ ֆինանսական աջակցությունը հասանելի է, և առնվազն մեկ (1) հեռախոսագանգի փորձ, որով LLUBMC-ը կամ իր լիազորված մատակարարները կկարողանան հիվանդին տեղեկացնել FAP-ի մասին:
 - c. Որևէ ECA-ներ սկսելուց առնվազն երեսուն (30) օր առաջ LLUBMC-ը կամ իր լիազորված մատակարարները՝
 - 1) Հիվանդին ծանուցում կտրամադրեն ECA-ների մասին, որոնք LLUBMC-ը պատրաստվում է նախաձեռնել խնամքի

դիմաց վճարում ստանալու համար:

- 2) Հիվանդին կտրամադրեն FAP-ի Պարզ լեզվով գրված ամփոփագիր (Plain Language Summary):
 - 3) Կփորձեն հիվանդի հետ բանավոր կապ հաստատել հեռախոսով՝ վերջին հայտնի հեռախոսահամարով:
- d. Չվճարելու դեպքում և այն բանից հետո, երբ ջանքեր են գործադրվել հիվանդին հասանելի ֆինանսական աջակցության մասին տեղեկացնելու համար, LLUBMC-ը կամ իր լիազորված մատակարարները կարող են սկսել հավաքագրումը՝ դուրսգրումից հետո առաջին հաշվի հայտարարագրի ամսաթվից 150 օր անց:
- e. Եթե լրացված Ֆինանսական աջակցության դիմումը (Financial Assistance Application, FAA) ստացվում է դիմելու ժամանակաշրջանում, LLUBMC-ը կկասեցնի ECA-ները, մինչև որ ողջամիտ ջանքեր գործադրի որոշելու համար՝ արդյոք հիվանդն իրավասու է ֆինանսական աջակցության համար FAP-ի շրջանակներում: Եթե անավարտ FAA-ը ստացվում է դիմելու ժամանակաշրջանում, ECA-ները կկասեցվեն ոչ ավելի, քան երեսուն (30) օրով, մինչև LLUBMC-ը գրավոր ծանուցում կտրամադրի հիվանդին այն մասին, որ ECA-ները կարող են նախաձեռնվել կամ վերսկսվել, եթե FAA-ը լրացված չլինի: Հավաքագրման գործընթացը կվերսկսվի հետևյալ իրավիճակներում. (i) եթե մասնակի ճշգրտում է տեղի ունեցել, (ii) եթե հիվանդը չի համագործակցում ֆինանսական աջակցության գործընթացի հետ, կամ (iii) եթե հիվանդն իրավասու չէ ֆինանսական աջակցություն ստանալու համար:
- f. Եթե երրորդ կողմի մատակարարը կամ հավաքագրման գործակալությունը համարում է, որ հիվանդը համապատասխանում է LLUBMC-ի ֆինանսական աջակցության իրավասության չափանիշներին, հիվանդի հաշիվը կարող է որակավորվել ֆինանսական աջակցության համար: ECA-ները կկասեցվեն ոչ ավելի, քան երեսուն (30) օրով, մինչև LLUBMC-ը գրավոր ծանուցում կտրամադրի հիվանդին այն մասին, որ ECA-ները կարող են նախաձեռնվել կամ վերսկսվել, եթե FAA-ը լրացված չլինի: Հավաքագրման գործընթացը կվերսկսվի հետևյալ իրավիճակներում. (i) եթե մասնակի ճշգրտում է տեղի ունեցել, (ii) եթե հիվանդը չի համագործակցում ֆինանսական աջակցության գործընթացի հետ, կամ (iii) եթե հիվանդն իրավասու չէ

Ֆինանսական աջակցություն ստանալու համար:

- 3.5. Հիվանդները կարող են հավաքագրման փուլի ընթացքում ցանկացած պահի ֆինանսական տվյալներ հաղորդել ֆինանսական աջակցություն ստանալու համար՝ համաձայն LLUBMC-ի FAP-ի: Աջակցության բոլոր հասանելի ուղիները և երրորդ կողմի վճարողների կողմից հասանելի վճարումները պետք է սպառված լինեն, նախքան նման աջակցությունը դիտարկելը:
 - 3.6. LLUBMC-ի կայքի և նամակագրության միջոցով հիվանդներին խրախուսում են մասնակի վճարումների մասին պայմանավորվածություն ձեռք բերել՝ համաձայն LLUBMC-ի FAP-ի, երբ ամբողջական վճարումները հնարավոր չեն:
- 4. ՀԱՇՎԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԵՎ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ**
- 4.1. Վճարման և հավաքագրման քաղաքականության, Ֆինանսական աջակցության քաղաքականության (FAP), FAP-ի Պարզ լեզվով գրված ամփոփագրի և Ֆինանսական աջակցության դիմումի (FAA) պատճենները լայնորեն կիրառարակվեն և հասանելի կլինեն հետևյալ կերպ՝
 - 4.2. **Առցանց՝** LLUBMC-ի կայքում՝ <https://medical-center.lomalindahealth.org/financial-assistance#llubmc>
 - 4.3. **Հեռախոսով՝** LLUBMC-ի Հաճախորդների սպասարկման ծառայությունում՝ (909) 651-4177
 - 4.4. **Փոստով՝** LLUBMC Customer Service, P.O. Box 700, Loma Linda, CA 92354
 - 4.5. **Տեղադրված նշաններով և թղթե օրինակներով կամ գրքույկներով** շտապ օգնության բաժանմունքներում, LLUBMC-ի բոլոր հիվանդանոցների ընդունարաններում և գրասենյակներում, հիվանդանոցի սպասարկման տարածքներին համապատասխան լեզուներով:
 - 4.6. **Անձամբ՝** ֆինանսական խորհրդատուի այցերի ժամանակ LLUBMC-ի հիվանդանոցների հիվանդների մոտ, ըստ անհրաժեշտության, և նշանակված անձնակազմի հետ քննարկումների ժամանակ, երբ նպատակահարմար է:
 - 4.7. **Հաշվի հայտարարագրերում** ներառված կլինի ֆինանսական աջակցությանը վերաբերող հարցումների համար հեռախոսահամար:
- 5. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ**
- 5.1. «Դիմելու ժամանակաշրջան» նշանակում է մի ժամանակաշրջան, երբ անձը կարող է դիմել ֆինանսական աջակցության համար: Դիմելու

Ժամանակաշրջանն ավարտվում է 240-րդ օրն այն բանից հետո, երբ LLUBMC-ը փոստով կամ էլեկտրոնային տարբերակով անձին տրամադրում է խնամքի դիմաց առաջին հաշվի հայտարարագիրը, սակայն, բացառիկ հանգամանքներում, այն կարող է երկարացվել LLUBMC-ի կողմից:

- 5.2. «Լիազորված մատակարարներ» նշանակում է մատակարարներ, ում հետ LLUBMC-ը կարող է պայմանագիր կնքել, որպեսզի ստեղծեն և հիվանդներին ուղարկեն նամակներ, ծանուցումներ, հաշիվներ և/կամ այլ հայտարարագրեր այն գումարների վերաբերյալ, որոնք հիվանդները պարտք են, և հիվանդների հետ կապվեն նրանց չվճարված հաշիվների վճարման վերաբերյալ:
- 5.3. «Արտակարգ հավաքագրման գործողություններ (ECA)» նշանակում է գործողություններ, որոնք LLUBMC-ը կատարում է այն անձի նկատմամբ, որը կապ ունի LLUBMC-ի Financial Assistance Policy-ով ապահովագրված խնամքի համար հաշվի վճարման հետ, և կարող է ներառել հետևյալը. (a) անձի պարտքը մեկ այլ կողմին վաճառելը, բացի ինչպես սահմանված է դաշնային օրենքով, (b) սպառողների վարկային բյուրոներին անձի վերաբերյալ անբարենպաստ տեղեկատվություն տրամադրելը, և (c) որոշակի գործողություններ, որոնք պահանջում են իրավական կամ դատական գործընթաց, ինչպես սահմանված է դաշնային օրենքով, ներառյալ՝ որոշ կալանադրումներ, անշարժ գույքի գրավագրկություններ, կցորդներ/առգրավումներ, քաղաքացիական գործողություն սկսելը, կատարողական թերթի հավելվածին անձին ենթարկելը և դատական հրամանով անձի աշխատավարձը պահելը: ECA-ները չեն ներառում որևէ կալանադրում, որը հիվանդանոցն իրավունք ունի ստանալու նահանգային օրենքով՝ դատավճռի, կարգավորման կամ փոխգիշման արդյունքում, որը պարտք է անհատին (կամ նրա ներկայացուցչին) անձնական վնասվածքների հետևանքով, որոնց համար հիվանդանոցը խնամք է տրամադրել:
- 5.4. «Ֆինանսական աջակցության քաղաքականություն» նշանակում է LLUBMC-ի կողմից հաստատված քաղաքականություն՝ ֆինանսական աջակցության կարիք ունեցող իրավասու հիվանդներին ֆինանսական աջակցություն տրամադրելու համար, մասնավորապես LLUBMC FAP:
- 5.5. «Ներքին հարկային օրենսգրքի 501(r)» ներառում է կանոնակարգեր, որոնք վերաբերում են բարեգործական հիվանդանոցներին:
- 5.6. «Բժշկական տեսակետից անհրաժեշտ խնամք» նշանակում է առողջապահական խնամքի ծառայություններ՝ ինչպես սահմանված է

ԿԱՏԵԳՈՐԻԱ՝ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

ԿՈՂ՝

BC-55

ԷԶ՝

6-ը 6-ից

ԹԵՄԱ՝

ՀԱՇՎԻ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՄ ԵՎ ՀԱՎԱՔԱԳՐՈՒՄ*

Կալիֆոռնիայի Բարեկեցության և հաստատությունների օրենսգրքի (California Welfare & Institutions Code) §14059.5-ով: Ծառայությունը բժշկական տեսակետից անհրաժեշտ է կամ բժշկական անհրաժեշտություն է, երբ այն ողջամիտ է և անհրաժեշտ է կյանքը պահպանելու, լուրջ հիվանդությունը կամ լուրջ հաշմանդամությունը կանխելու կամ սուր ցավը թեթևացնելու համար: Այս սահմանումից բացառվում են այն յուրահատուկ ծառայությունները, որտեղ մատչելի են բժշկական տեսակետից արդյունավետ այլընտրանքային թերապիաները: Օրինակները ներառում են՝ 1) կոսմետիկ և/կամ պլաստիկ վիրահատության ծառայություններ, 2) անպտղության ծառայություններ, 3) տեսողության ուղղում, 4) պրոտոնային թերապիա, 5) ռոբոտային ընթացակարգեր, 6) օրթոպեդիկ սարքեր/պրոթեզներ, 7) փոխնակ հղիություն, կամ 8) այլ ծառայություններ, որոնք հիմնականում հարկավոր են հիվանդի հարմարավետության և/կամ հիվանդի հարմարության համար:

5.7. «Պարզ լեզվով գրված ամփոփագիր» նշանակում է ֆինանսական աջակցության քաղաքականության ամփոփում, որը հեշտ է կարդալ, հասկանալ և կիրառել:

6. ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԽԱՉԱԶԵՎ ՀՂՈՒՄ

6.1. LLUBMC Ֆինանսական աջակցության քաղաքականություն

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է. Ադմինիստրատիվ խորհուրդ, LLUBMC Գլխավոր գործադիր տնօրեն, LLUBMC Ֆինանսների ավագ փոխնախագահ, LLUBMC Խորհուրդ